205 թ. Մամուն դրեց Խաս ի. Մուհամեդ ի. Արի Խալեդին Հայաստանի եւ Ադրպատականի վերայ կառավարիչ։

209 թ. Մամուն նշանակեց Ալի ի. Սադաքա'ին, որ Զուբայիք կը կոչուէր, Հայաստանի եւ Ադրպատականի վերայ։

235 թ. Մուտավակիլ յանձնեց իւր որդուն՝ Զուբայր Մուտազզիմ Բիլլահին Խորասան իւր չբնակայիւք Հանդերձ, Տաբարիստան, Ռայ, Համատան, Ադրպատական եւ պարսից գաւառները։

236 թ. Մեռաւ Աբու Սայիդ Մուհամեդ ի. Խասէֆ ալ-Մուզաֆֆէ, որ կ'իշխէր Հայաստանի եւ Ադրպատականի վերայ։ Մուտավակիլ նշանակեց նորա որդի Խասէֆին հօր տիրած երկրներուն վերայ։

237 թ. Հայաստանի բնակիչք յարձակեցան իրենց կառավարիչ Խասէֆ ի. Մուհամեդի վերայ եւ սպանեցին նորան[1]։

237 թ. Ալի ի. Եահեա Հայը ձեռնարկեց մի մեծ արշաւանք Ցունաց դէմ։

238 թ. Ալի ի. Եահեա Հայը արշաւեց Ցունաց դէմ։

248 թ. Ալի ի. Եահեա հեռացաւ Ասորիքի սահմանագլխից եւ նշանակեցաւ կառավարիչ Հայաստանի եւ Ադրպատականի վերայ։

254 թ. սպանեցաւ Բուղա ալ-Շարապի։

256 թ. Խաս ի. Շէյխ մեկնեցաւ Ասորիքից եւ նստաւ Հայաստան կառավարիչ։

261 թ. Մուտամիդ նշանակեց իւր որդի Զաֆֆարին, որ Մուֆավվադ իլա-ալլահ կը կոչուէր, Ասորիքի, Միջագետքի, Մոսուլի եւ Հայաստանի վերայ։

---

1 Շարունակութիւնն՝ խռովեցոյց յարձակումը Խասէֆի վերայ, որպէս եւ Տփղխի առումը՝ բառացի քաղած է Տարարիից (տես վերեւ)։